ԽՈՍՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գևորգյան Ա.Գ.

«ԱՄԻ» մանկական զարգացման կենտրոնի լոգոպեդ

Հանգուցային բառեր. խոսքի ընդհանուր թերզարգացում, խոսքի բնականոն զարգացում, բառապաշարի ուսումնասիրում, զարգացնող աշխատանքներ:

Հայտնի է, որ խոսքը երեխայի զարգացման գործընթացի հզոր գործոններից է, որի շնորհիվ երեխան հաղորդակցվում է, արտահայտում է իր մտքերն ու ցանկությունները: Լոգոպեդիայում «խոսքի ընդհանուր թերզարգացում» եզրույթը գործածվում է բնականոն լսողությամբ և առաջնայնորեն պահպանված մտավոր կարողություններով երեխաների խոսքային այնպիսի պաթոլոգիայի դեպքում, երբ խանգարվում է խոսքի բոլոր բաղադրամասերի՝ հնչյունահնչութային, բառաքերականական կողմերի զարգացումը [2]:

Որպես խոսքային խանգարում՝ խոսքի ընդհանուր թերզարգացումն ընդունված է դասակարգել 4 մակարդակի: Մեր կողմից անցկացված հետազոտության նպատակին համապատասխան՝ ուսումնասիրության է ենթարկվել խոսքի ընդհանուր թերզարգացման երրորդ մակարդակ ունեցող երեխաների բառապաշարը՝ զարգացման առավել արդյունավետ ուղիներ փնտրելու համար:

Խոսքի բառաքերականական կողմի, մասնավորապես, բառապաշարի ձևավորումն ու զարգացումը կարևոր նշանակություն ունեն երեխաների կողմից ուսումնական նյութն ընկալելու և յուրացնելու գործընթացում [1]: Բառապաշարի ուսումնասիրումը կարևորել ենք, քանի որ վերջինիս նպատակաուղղված իրականացման դեպքում նշված երեխաների հետ իրականացվող շտկող-զարգացնող աշխատանքներն այս կերպ կունենան ավելի մեծ արդյունավետություն:

Խոսքի ընդհանուր թերզարգացման երրորդ մակարդակ ունեցող երեխաների բառապաշարի առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակով Երևան քաղաքի թիվ 9, 42 և 109 ներառական մանկապարտեզներում կատարել ենք հետազոտություն:Մեր հետազոտության համար մեթոդաբանական հիմք է հանդիսացել Տ.Բ. Ֆիլիչևայի և Գ.Վ. Չիրկինայի կողմից առաջարկված խոսքի ընդհանուր թերզարգացման հետազոտման համընդհանուր մեթոդիկան [3]: Հետազոտությունն իրականացրել ենք բառապաշարի ուսումնասիրման առանձնակի շեշտադրմամբ:

Ընդհանուր առմամբ, հետազոտությանը մասնակցել են 24 երեխաներ: Փորձարարական խմբի մեջ (ՓԽ) ընդգրկված էին 4-5 տարեկան 8 երեխաներ, ովքեր ունեին խոսքի ընդհանուր թերզարգացման երրորդ

մակարդակի ախտորոշում: Ստուգողական խմբում (ՍԽ) ևս ընդգրկված էր 4-5 տարեկան խոսքի ընդհանուր թերզարգացման երրորդ մակարդակ ունեցող 8 երեխաներ: Նշենք, որ համեմատության համար մանկավարժական գիտափորձին մասնակցել են նաև 8՝ 4-5 տարեկան խոսքի բնականոն զարգացում ունեցող երեխաներ (ԽՆԶ): Ծնողների հետ զրույցի ընթացքում պարզվեց, որ խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների խոսքի զարգացումն ընթացել է զգալի հապաղումով.նրանք իրենց առաջին բառերն արտասանել են 1,5 տարեկանում, իսկ պարզ արտահայտությունները՝ 2,5 տարեկանից հետո: Հնչարտաբերման խանգարումներ ուներ ՓԽ-ի և ՍԽ-ի երեխաների 87.5%-ը, իսկ խոսքի նորմալ զարգացում ունեցող երեխաների՝ 25%-ը: Արտաբերական ապարատի անատոմիական փոփոխություններ ուներ ՓԽ-ի և ՍԽ-ի երեխաների 37.5%-ը, իսկ խոսքի նորմալ զարգացում ունեցող երեխաների՝ 12.5%-ը: ՓԽ-ի և ՍԽ-ի երեխաների 93.75%-ն ուներ հնչութային գործընթացի խանգարումներ, իսկ խոսքի բնականոն զարգացում ունեցողների՝ 12.5%-ը: Բառաքերականական կողմի խանգարումներ ուներ ՓԽ-ի և ՍԽ-ի երեխաների 81.25%-ը, իսկ խոսքի նորմալ զարգացում ունեցող երեխաների՝ 25%-ը: Խոսքի քերականական կողմի ուսումնասիրման ընթացքում ՓԽ-ի և ՍԽ-ի երեխաների խոսքում արձանագրվել են տարբեր քանակությամբ սխալներ (տես նկար 1):

Հետազոտության ընթացքում մենք պարզեցինք, որ ուսումնասիրված երեխաները խոսքի յուրահատուկ խանգարումներ ունեն հնչարտաբերման, բառաքերականական ոլորտներում և կապակցված խոսքում:

Ավելի հստակ պատկերացնելու համար մեր հետագա շտկող-զարգացնող աշխատանքների իրակա-



Նկ.1 Խոսքի հնչյունահնչութային և բառաքերականական կողմերի խանգարումների գրաֆիկական պատկերը

նացման ուղղությունը՝ ուսումնասիրել ենք երեխաների բառապաշարը: Երեխաներին հանձնարարվող առաջադրանքները բաժանվել են մի քանի մասերի: Հետազոտական աշխատանքների առաջին խմբի առաջադրանքում երեխաներից պահանջվում էր մեր կողմից ընտրված նկարների հետ գործածել առարկա և գործողություն ցույց տվող համապատասխան բառեր: Ճշտվել է երեխաների ասած մի շարք բառերի (սառնարան, հեռուստացույց) առարկայական նշանակությունը:

Հետազոտության արդյունքում դասակարգել ենք խոսքի ընդհանուր թերզարգացման երրորդ մակարդակ ունեցող երեխաների բառապաշարին բնորոշ սխալները: Դրանք են՝ 1. հնչեղությամբ մոտ, բայց իմաստով տարբեր բառերի նույնականացում. (թեյնիկի քիթ -քիթ), 2. առարկայի մասերի անվանման փոխարինում ամբողջ առարկայի անվանմամբ. (սլաքներ - ժամացույց), 3. արտաքին նմանություն ունեցող առարկաների անվանումների փոփոխումներ. (մահճակալ – բազմոց, բազկաթոռ – աթոռ, նարինջ – դեղձ), 4. առարկայի անվանման փոխարինում՝ դրանով կատարվող գործողության անվանմամբ. (մատիտ-նկարել), 5. գործողությունների անվանումների փոխարինում՝ իմաստով մոտ գործողությունների անվանմամբ. (ներկել-նկարել):

Երկրորդ առաջադրանքի միջոցով փորձել ենք ուսումնասիրել երեխաների՝ հոմանիշ և հականիշ բառերի իմացության մակարդակը: Հականիշների ընտրությունը կատարեցինք «Ասա՛ հակառակը» խաղի միջոցով:

Խոսքի բնականոն զարգացում ունեցող երեխաները ցուցաբերեցին հականիշների յուրացման անբավարար մակարդակ. նրանց 12.5%-ը առաջադրանքը կատարել էր սխալ, իսկ առաջադրանը չկատարելու դեպքեր չեն եղել: Երեխաներն հազվադեպ էին շփոթում առաջարկվող բառերի հականիշները (հաստ – նեղ, երկար – ցածր) կամ՝ բառն ասում էին ժխտական մասնիկով (գալ – չգալ), երեխաների 87,5%-ը առաջադրանքը կատարել էր հաջողությամբ:

Հոմանիշների իմացության ուսումնասիրման ժամանակ պարզեցինք, որ երեխաների 25%-ը չէր կարողացել կատարել առաջադրանքը, 25%-ը հոմանիշների ընտրության առաջադրանքը կատարել էր սխալ և միայն 50%-ն էր առաջադրանքը ճիշտ կատարել: Առավել հաճախ թույլ տրվող սխալներն են եղել հոմանիշների փոխարեն նույնարմատ բառերի ընտրությունը (քաջ – քաջություն):

ՓԽ-ում և ՍԽ-ում հոմանիշների ընտրության ժամանակ երեխաների 43.75%-ը առաջադրանքը չէր կատարել, 31.25%-ը սխալ էր կատարել, իսկ առաջադրանքը ճիշտ էին կատարել երեխաների միայն 25%-ը: Հականիշներն ընտրելիս առաջադրանքը չէր կատարել երեխաների 25%-ը, առաջադրանքը սխալ էր կատարել 31.25%-ը, իսկ ճիշտ կարողացել էր կատարել 43.75%-ը:

Հականիշներն անվանելիս ՓԽ-ի և ՍԽ-ի երեխաները հաճախ ավելացնում էին «չ» ժխտական մասնիկը:Սխալներ էին թույլ տալիս՝ բառերը չտարբերակելու պատճառով: Այս խմբի երեխաներից շատերը հոմա-

նիշներն ընտրելիս դժվարություններ են ունեցել: Երեք խմբերի երեխաների կողմից հոմանիշ և հականիշ բառերի շուրջ կատարած առաջադրանքի արդյունքները ներկայացնենք տոկոսներով (տե՛ս նկար 2):

Հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ ի տարբերություն ՓԽ-ի և ՍԽ-ի երեխաների ցուցաբերած տվյալների՝ խոսքի բնականոն զարգացում ունեցող երեխաներն ավելի լավ են կողմնորոշվում հոմանիշների և հականիշների ընտրության հարցում:

Երրորդ առաջադրանքի նպատակը երեխաների ինքնուրույն կապակցված խոսքի մակարդակի ուսումնասիրումն էր. ուսումնասիրվել է նկարների շարքով պատմվածք կազմելու կարողությունը:

Ստորև բերված նկարում ներկայացնում ենք խոսքի բնականոն զարգացում ունեցող երեխաների և ՓԽ-ի, ՍԽ-ի երեխաների կողմից կիրառվող խոսքի տարբեր մասերի տոկոսային պատկերը (տե՛ս նկար 3):

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների խոսքի ուսումնասիրման ընթացքում պարզեցինք հետևյալ առանձնահատկությունները՝ ագրամատիզմներ, միօրինակ կառույցի նախադասություններ, պատմվածքի սկզբի և ավարտի բացակայություն, երկարատև դադարներ՝ պայմանավորված անհրաժեշտ բառի ընտրության գործընթացով:

Հիմք ընդունելով մեր կատարած հետազոտական աշխատանքների արդյունքները, ուսումնասիրելով, վերլուծելով և համադրելով խոսքի ընդհանուր թերզարգացման ժամանակ իրականացվող շտկողական աշխատանքների վերաբերյալ մասնագիտական գրականություն՝ փորձել ենք ստացված տեղեկությունները տեղայնացնել խոսքի ընդհանուր թերզարգացման երրորդ մակարդակ



Նկ.2 Հոմանիշների և հականիշների շուրջ կատարած առաջադրանքների մակարդակը



Նկ.3 Կապակցված խոսքում խոսքի տարբեր մասերի կիրառման մակարդակը

ունեցող երեխաների բառապաշարի զարգացման և հարստացման ուղղությամբ իրականացվող լոգոպեդական աշխատանքներում: Լոգոպեդական աշխատանքներն իրականացրել ենք փորձարարական խմբի երեխաների հետ:

Բառապաշարի զարգացման աշխատանքների կազմակերպման ընթացքում կարևորել ենք օնտոգենեզում բառի ձևավորման առանձնահատկությունների, բառապաշարի զարգացման օրինաչափությունների, խոսքային խանգարում ունեցող երեխաների բառապաշարի առանձնահատկությունների հաշվառումը:Դրա հիման վրա խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի զարգացման աշխատանքները կատարել ենք հետևյալ ուղղություններով՝ բառապաշարի ծավալի ընդլայնում՝ շրջապատող իրականության մասին պատկերացումների ընդլայնմանը զուգահեռ, բառերի իմաստի հստակեցում, բառի իմաստային կազմի ձևավորում, բառապաշարի ակտիվացում, բառի որոնման գործընթացի կատարելագործում, բառի տեղափոխում պասիվ բառապաշարից՝ ակտիվ: Բառապաշարը հարստացրել ենք նոր բառերով, ընդհանրացնող անուններով, հոմանիշներով, հականիշներով, բազմիմաստ բառերով, բառակազմության հնարներով: Ընդ որում՝ բառապաշարը հարստացրել ենք խոսքի տարբեր մասերին պատկանող բառերով, և այս ամենի արդյունքում խոսքի ընդհանուր թերզարգացման երրորդ մակարդակ ունեցող երեխաների բառապաշարը զգալիորեն հարստացել է:

Կարևորելով խոսքի ընդհանուր թերզարգացման երրորդ մակարդակ ունեցող ավագ նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի՝ մասնավորապես, բառապաշարի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ հարկ ենք համարում նշել, որ շտկողամանկավարժական աշխատանքների արդյունավետության բարձրացման համար լոգոպեդական պարապմունքները պետք է սկսել դեռևս նախադպրո-

ցական տարիքից, քանի որ խոսքի ընդհանուր թերզարգացումը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ դպրոցական ծրագիրը յուրացնելիս: Լոգոպեդը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, ընտրի համապատասխան մեթոդներ՝ շեշտը դնելով տվյալ խոսքային խանգարմանը բնորոշ առանձնահատկությունների վրա: Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների հետ իրականացվելիք լոգոպեդական պարապմունքները պլանավորելիս չպետք է մոռանալ, որ բառապաշարի ձևավորման ու զարգացման յուրաքանչյուր փուլ կարևոր նշանակություն ունի երեխաների կողմից ուսումնական նյութն ընկալելու և յուրացնելու գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кондратенко И. Ю., Формирование эмоциональной лексики у дошкольников с общим недоразвитием речи. С-Пб., 2006.

2. Левина Р.Е. Основы теории и практики логопедии.М.,1968.

3. Филичева Т.Б., Чиркина Г.В. Устранение общего недоразвития речи у детей дошкольного возраста. М., 2008.

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ ИССЛЕДОВАНИЯ И РАЗВИТИЯ СЛОВАРЯ ДЕТЕЙ С ОНР

Геворкян А.Г.

Логопед детского центра раннего развития “АМИ ”

Статья посвящена исследованию словаря и особенностям его развития о детей с третьим уровнем ОНР.

Осознавая важность речевого развития, особенно развития словарного запаса детей третьего уровня ОНР в старшем дошкольном возрасте, считаем нужным заметить, что для успешных коррекционно-педагогических работ логопедические занятия с этими детьми нужно начинать еще в дошкольном возрасте. В коррекционных работах логопед должен учитывать возрастные и психологические особенности ребенка, выбирать соответствующие методы и способы воздействия, учитывать специфику данного речевого расстройства. Результаты нашего исследования позволяют сделать выводы о том, что в проведении коррекционных работ важно учитывать возраст ребенка, его способности, потенциальные возможности и выбирать интересные для него дидактические материалы, упражнения и игры. Планируя логопедические занятия для детей с ОНР, нужно не забывать, что каждый этап формирования и развития словаря имеет важное значение в эффективном усвоении учебного материала.

SUMMARY[1]

THE PECULIARITIES OF VOCABULARY STUDY AND DEVELOPMENT OF CHILDREN WITH GENERAL SPEECH DISORDER

Gevorgyan A.

Speech therapist at the "AMI"children's early development center

To emphasize that it's really important to improve children's speech and vocabulary development activities of preschool age, it is necessary to mention that we should start effective speech therapy classes with these children taking into account each child's age and psychological characteristics, choose the appropriate methods and means of influence with an emphasis on the verbal disability and typical verbal features. The results of the study allow us to conclude that speech activities should take into account the child's age, abilities and potential access choosing appropriate teaching materials, exercises and interactive games. For those children who have this kind of disabilities, it is necessary to plan lessons according to the rules of lexicon formation and development as the educational material for each stage is really important in understanding and mastering process efficiency.

1 «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» գիտամեթոդական հանդեսի հոդվածների ամփոփումները անգլերեն լեզվով թարգմանել և խմբագրել է հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Լիլիթ Ասոյանը